

**«Հայաստանի Հանրապետության կառավարության  
2012 թվականի դեկտեմբերի 20-ի N1676-Ն  
որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ  
կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_\_\_ 2020 թվականի N \_\_\_\_\_ -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N1676-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի  
Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի  
դեկտեմբերի 20-ի «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական  
վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N1676-Ն  
որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման N1 հավելվածի 30-րդ կետի 5-րդ ենթակետը՝ «ըստ վարձու  
աշխատողների» բառերից հետո լրացնել «, գործատուի (բացառությամբ  
պետական կառավարչական հիմնարկների, համայնքային կառավարչական  
հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և  
պետական ոչ առևտրային կազմակերպությունների) մոտ առկա թափուր  
հաստիքների (աշխատատեղերի) թվաքանակը» բառերով,

2) որոշման N3 հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությունում՝  
«փաստացի աշխատած ժամերը» բառերից հետո լրացնել «գործատուի  
(բացառությամբ պետական կառավարչական հիմնարկների, համայնքային  
կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների)

մոտ առկա թափուր հաստիքների (աշխատատեղերի) թվաքանակը,» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: